ԵՐԿՐՊԱԳՈՒԹՅՈՒՆԸ ԱՊՐԵԼԱԿԵՐՊ Է

1 ԹԱԳ. 16:14-23

ՍՈՒՐԲԳՐԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ.

Եւ Տիրոջ Հոգին հեռացավ Սաւուղից.

Եւ Տիրոջ կողմից մի չար ոգի նեղում էր նորան: 15 Եւ Սաւուղի ծառաները նորան ասեցին. Ահա Աստուծո կողմից մի չար ոգի քեզ նեղում է. 16 Մեր տէրն իր առաջին կանգնած ծառաներիդ ասա, որ մի լավ քնարահար որոնեն, որ երբոր Աստծուց ուղարկված չար ոգին քեզ վրա գա, նա իր ձեռքով քնարն կնվագի, և դու լավանաս: 17 Եւ Սաւուղն իր ծառաներին ասեց. Հիմա ինձ համար մէկ լավ քնարահար գտէք, և նորան ինձ մօտ բերէք: 18 Եւ Ծառաներից մէկը պատասխանեց և ասեց.

Ես տեսել եմ Բեթղեհէմացի Յեսսէի տղային, որ քնար նվագել գիտի. Եւ քաջ, զօրավոր, պատերազմող, ճարտասան, և գեղեցիկ տեսքով մարդ է. Եւ **Տէրը նորա հետ է:**

19 Եւ Սաւուղը Հեսսէին պատգամավորներ ուղարկեց և ասեց. Քո որդի Դավիթին, որ ոչխարների մօտ է, ինձ մօտ ուղարկիր: 20 Եւ Հեսսէն մի էշի բեռն հաց, մի տիկ գինի, և այծերից մի ուլ առավ, և իր որդի Դավիթի ձեռքով Սաւուղին ուղարկեց: 21 Եւ Դավիթն եկավ Սաւուղի մօտ ու կանգնեց նրա առջև: Սաւուղը նրան շատ սիրեց, և նա նրա կապարճակիրը դարձավ: 22 Եւ Սաւուղը Հեսսէին մարդ ուղարկեց ասելով. Դավիթը թող ինձ մօտ մնա, քանզի իմ առաջ նա շնորհ գտավ: 23 Երբոր Աստուածանից (Աստված թույլ է տալից) այն ոգին գալիս էր Սաւուղի վրա, Դավիթը առնում էր քնարը և նվագում իր ձեռքով. Եւ Սաւուղը հանգստանում և լավանում էր, և չար ոգին նորա վրայից հեռանում էր:

UPWARD: God

Դեպի վեր: Աստված

We agree to be devoted to and developing a supernatural relationship with God by - Knowing God through prayer, worship and studying His Word.

Մենք համաձայն ենք լինել նվիրված և զարգացնել գերբնական հարաբերություն Աստծո հետ – աղոթքի, երկրպագության եւ Իր խոսքի միջոցով:

Ինչ է երկրպագությունը: Այն ավելին է քան երգը:

> ***Հով. 4:23-24 -*** *23 Բայց ժամանակ կգա, և հիմա է, որ ճշմարիտ երկրպագողները հոգով և ճշմարտությունով կերկրպագեն Հօրը, որովհետև Հայրն էլ այսպէս է ուզում իր երկրպագողներին: 24 Աստված Հոգի է, և նորան երկրպագողները պէտք է հոգով և ճշմարտությունով երկրպագեն:*

–Վաշինգտոն Յուլանդան ասել է.

Խոնարհ սիրտը ճշմարիտ երկրպագություն է առաջացնում և ճշմարիտ երկրպագությունը խոնարհ սիրտ է ստեղծում:

A humble heart produces true worship and true worship creates a humble heart.

I. Երկրպագությունը սկսվում է մեր սրտի խորքում (ներսում) և այն արտահայտում է թե ինչպիսին է մեր առնչությունը /կապը Աստծու հետ:

Worship starts from deep within our hearts and is expressed in the way we relate to God

- **Սավուղի առնչությունը Աստծո հետ:**

  Եւ Տիրոջ Հոգին հեռացավ Սավուղից. Եւ Տիրոջ կողմից մի չար ոգի նեղում էր նորան: (գլուխ 15)

- **Դավիթի առնչությունը Աստծո հետ:**

  ...քնար նվագել գիտի. Եւ քաջ, զօրավոր, պատերազմող, ճարտասան, և գեղեցիկ տեսքով մարդ է. Եւ Տէրը նորա հետ է:

II. Երկրպագությունը ամենօրյա ապրելակերպ և փորձ է, և ոչ թե ինչ որ մի իրադարձություն:

Worship is a lifestyle and daily experience and not an event.

- **Համայնքը Դավիթին ճանաչում էր որպես երկրպագող.**

  18 Եւ Ծառաներից մէկը պատասխանեց և ասեց. Ես տեսել եմ Բեթղեհէմացի Հեսսէի տղային, որ քնար նվագել գիտի.

  Մատ. 15:8 - *8 Այս ժողովուրդը իր բերանով է մօտենում ինձ, և շրթունքներով է ինձ պատվում, բայց իրանց սիրտն ինձանից հեռացած ջոկված է:*

III. Երկրպագությունն այն է, թե ինչպես ենք մենք ապրում մեր ամենօրյա կյանքը, այլ ոչ թե ինչպես ենք մենք այն արտահայտում/ցուցաբերում կիրակի առավոտյան:

Worship is how we live our daily lives and not how we express it on Sunday mornings

Հռ. 12:1-2 - *1 Արդ աղաչում եմ ձեզ, եղբայրներ, Աստուծո ողորմութիւնով, որ ձեր մարմինները ներկայացնէք կենդանի, սուրբ և Աստուծո ընդունելի պատարագ, որ է ձեր բանաւոր պաշտօնը: 2 Եւ մի կերպարանվեք այս աշխարհի կերպարանքով. այլ նորոգվեցէք ձեր մտքի նորոգութիւնամբ, որ դուք քննէք թէ ի՞նչ է Աստուծո կամքը՝ բարին, հաճելին և կատարեալը:*

In other words, worship isn't something we simply feel, or an experience that we seek while singing, lifting our hands, or closing our eyes. It's something we DO with our bodies in all of life.

*Սաղ. **51:17** - 17 Աստուծո ընդունելի պատարագները կոտրված հոգին է. կոտրուած ու փշրուած սիրտը դու չես անարգի, ով Աստուած:*

Ամփոփում

1. **Մենք ասում ենք, որ երկրպագությունն ապրելակերպ է, բայց քանիսն են մեզանից իրականում ապրում այն:**

   We say that worship is a lifestyle, but how many of us actually live it?

2. **Ի՞նչպես է Ձեր ապրելակերպն արտացոլում երկրպագությունը: Արդյո՞ք Դուք եկեղեցում նույն մարդն եք ինչպիսին Դուք Ձեզ ցուցաբերում եք շաբաթվա ընթացքում: Միթե՞ Ձեր ապրած կյանքը եկեղեցում և դրսում նույնն է:**

   How does your lifestyle reflect worship? Do you live in such a way that you are the same person in church as you are the rest of the week?